

**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՍՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ
ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Բանալի բառեր՝ լեզվաբանություն, գիտական մտածողություն, գիտական խոսք, գրական լեզու, բառապաշար, տերմին, համագործածական բառեր, պատմողական նախադասություն, քերականական միջոցներ:

Keywords: linguistics, scientific thinking, scientific speech, literary language, vocabulary, term, cohesive devices, declarative sentence, grammatical means.

Ի՞նչ առանձնահատկություններով է բնութագրվում գիտական խոսքը: Ինչպե՞ս է այն կառուցվում լեզվաբանական տեքստերում, և ի՞նչ լեզվական միջոցներ են նպաստում դրա ոճական ինքնատիպությանը: Այս հարցադրումները հատկապես արդիական են այն պայմաններում, երբ գիտության լեզուն ձևավորվում է ոչ միայն որպես բովանդակության արտահայտման միջոց, այլև որպես լեզվաբանական վերլուծության առարկա: Արձագանքելով այս դիտարկմանը՝ նպատակահարմար է ուսումնասիրել գիտական խոսքը լեզվաբանական աշխատությունների մեջ՝ հիմնվելով դրա լեզվական հատկանիշների վրա:

Գիտական խոսքը լեզվական հաղորդակցման այն տեսակն է, որի հիմնական նպատակը գիտական տեղեկատվության փոխանցումն է՝ հստակ, տրամաբանական և հիմնավորված ձևով: Այն գործում է որպես հենասյուն գիտական գործունեության բոլոր փուլերում՝ դիտարկումից մինչև արդյունքների ներկայացում: Այդ պատճառով էլ գիտական խոսքի ճիշտ կառուցումը և ձևակերպումը ձեռք են բերում կենտրոնական նշանակություն գիտական հոդվածների, զեկույցների, ատենախոսությունների և այլ ակադեմիական աշխատանքների մեջ:

Գրական լեզուն, որպես յուրաքանչյուր մշակույթի խոսքային ինքնության հիմնասյուներից, ապահովում է ոչ միայն լեզվական շփման ֆունկցիան, այլև գիտական մտքի արտահայտման հնարավորությունը: Գիտական խոսքը, որպես գրավոր խոսքի առանձնահատուկ դրսևորում, ձևավորվում է գրական լեզվի հիման վրա՝ պահպանելով դրա սահմանումները, միաժամանակ ձեռք բերելով իր յուրահատուկ կառուցվածքային, ոճական և տերմինաբանական առանձնահատկությունները: Ուստի գրական լեզվի և գիտական խոսքի փոխադարձ կապը ոչ միայն լեզվաբանական, այլև հաղորդակցական և մշակութաբանական տեսանկյունից է արդիական՝ գիտական մտքի ձևակերպման, հասանելիության և ընկալման գործընթացներում:

Հայ լեզվաբան Սերգեյ Աբրահամյանն իր «Գիտական ոճը և նրա առանձնահատկությունները» հոդվածում նշում է, որ գրական լեզուն, որպես տվյալ լեզվի մշակված և կատարյալ ձև, համաժամանակյա կտրվածքով ներկայացնում է միատարրություն, որը

հակադրվում է թե՛ բարբառներին, թե՛ գրական լեզվի նախորդ փուլերին: Մակայն խոսքային մակարդակում գրական լեզուն ունի իր տարբերակները՝ տարբեր **գործառական ոճերի** տեսքով: «**Գործառական ոճերը լեզվական այն պարբերացումներն են, որոնք** կապված են հասարակական կյանքի այս կամ այն բնագավառի և գործառական այլ ոլորտների հետ» [Խաչատրյան, Միրումյան, 2020, 343]:

Ըստ այդմ էլ ընդունված է առանձնացնել հինգ հիմնական գործառական ոճ՝ գիտական, պաշտոնական, հրապարակախոսական, գեղարվեստական և առօրյա-խոսակցական:

Ուշադրության առնելով այս ամենը՝ ուսումնասիրենք քննության առարկա դարձած գիտական խոսքի բնութագրական հատկանիշները, սկզբունքները, կառուցվածքը:

Հայտնի է, որ գիտական ոճը ենթարկվում է որոշակի կանոնների ու սկզբունքների, որոնք պայմանավորված են գիտական տեքստի նպատակի՝ տեղեկություն հաղորդելու և գիտելիք տարածելու պահանջով: «Գիտական ոճում առավելապես գործում է լեզվի հաղորդման գործընթացը, այն ոճական գունավորման առումով համեմատաբար չեզոք է, ուստի և հեղինակային անհատականությունն ու ինքնատիպությունը հաճախ չեն դրսևորվում» [Եզեկյան, 2014, 30]:

Գիտական ոճի հիմնական բնութագրիչներից է տերմինաբանությունը, որն ակնառու կերպով արտահայտվում է գիտական խոսքի մեջ: Տերմիններն ու տերմինային բառակապակցությունները հնարավորություն են տալիս ճշգրիտ ներկայացնելու տվյալ գիտաճյուղին բնորոշ հասկացությունները՝ ապահովելով խոսքի միանշանակություն և ընդհանրականություն: Այս հատկանիշների շնորհիվ տերմինները նպաստում են գիտական խոսքի հստակությանն ու տրամաբանական կառուցվածքին: Գիտական ոճում հաճախ հանդիպում են համագործածական բառեր, որոնք տվյալ համատեքստում ստանում են տերմինային արժեք՝ դառնալով մասնագիտական լեզվի բաղկացուցիչ: Այդ բառերը կիրառվում են ընդհանրացված իմաստով՝ լրացնելով գիտական խոսքի տերմինաբանական հենքը:

Գիտական խոսքի լեզվաբառարանը կազմված է գրական լեզվից: Հեղինակը գիտական շարադրանքի միջոցով հաղորդում է իր մտքերը, տեսակետները և հետազոտությունների արդյունքները՝ վերլուծելով, հիմնավորելով կամ ժխտելով որոշակի երևույթներ, նաև համադրելով կամ հակադրելով տարբեր գիտական մոտեցումներ: Գիտական ոճի բնութագրական հատկանիշները պայմանավորված են գիտական ոլորտում հաղորդակցման խնդիրներով և գիտական մտածողության եղանակով: «Գիտական ոճի բնորոշ հատկանիշներն են ընդհանրականությունը, նորմատիվությունը, ճշգրտությունը, շեշտված տրամաբանականությունը» [Աբրահամյան, 1982, № 3, 14]:

Իրավամբ, գիտական ոլորտում հաղորդակցության բարձր արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է լեզվամտածողության ձև, որը հիմնված է հասկացության, դատողության և եզրակացության վրա: Եթե հասկացությունն ու դատողությունը մարդկային մտածողության հիմնարար և անբաժան բաղադրիչներ են, ապա դրանց առավել ամբողջական ու համակարգված դրսևորման հարթակն անշուշտ գիտական խոսքն է: Մա բնական է, քանի որ գիտական խոսքը կառուցված է տրամաբանական կառույցների

և համոզիչ փաստարկների վրա: Գիտությունը նպատակ ունի բացահայտել իրականության խորքային օրինաչափությունները, իսկ այդ գործընթացում առանցքային դեր են խաղում ընդհանրականացումը, վերացական մտածողությունը և ձևաբանական ճշգրտությունը: Այս համատեքստում, ընդհանրականությունն ու վերացականությունը հանդես են գալիս որպես գիտական ոճի բնորոշ և բնույթին համարժեք հատկանիշներ՝ նպաստելով բովանդակության առավել հստակ, կառուցվածքային և համակարգված

Այսպիսով, ուսումնասիրության նպատակն է վերլուծել գիտական խոսքի կառուցվածքը՝ փորձելով բացահայտել լեզվաբանական աշխատություններում կիրառվող բառապաշարը, խոսքի մասերի հարաբերակցությունը, նախադասությունների տեսակները և դրանց գործառույթները: Այս ուսումնասիրությունը ձգտում է բացահայտել գիտական ոճի բնութագրական հատկանիշները և դրանց դերը գիտական հաղորդակցման արդյունավետության մեջ: Սույն ուսումնասիրությունը ձևավորվել է Վ. Համբարձումյանի «Լեզվաբանության հիմունքներ», Էդ. Մկրտչյանի և Լ. Խաչատրյանի «Հայոց լեզվի պատմության դասընթաց» և Գ. Ջահուկյանի «Ձրույցներ հայոց լեզվի մասին» աշխատություններով, որոնք ծառայում են որպես տեսական հիմք և հենակետ՝ լեզվաբանական վերլուծությունների իրականացման համար:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ գիտական խոսքի կառուցվածքի ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի ժամանակակից լեզվաբանության մեջ, քանի որ այն նպաստում է գիտական հաղորդակցման հստակության և հասկանալիության բարձրացմանը: Տեխնոլոգիաների զարգացման և տեղեկատվության արագ տարածման պայմաններում գիտական տեքստերի լեզվական վերլուծությունը թույլ է տալիս բարելավել գիտական հաղորդակցման որակը: Բացի այդ, նման ուսումնասիրությունները նպաստում են գիտական տեքստերի թարգմանության և ավտոմատացված տվյալների մշակման մեթոդների կատարելագործմանը, որը հատկապես կարևոր է բազմալեզու գիտական հանրության համար:

Գիտական ոճի ընդհանրականությանն ու վերացականությանը նպաստում են նաև բայանունների, վերացական գոյականների առատ, երբեմն շատ հազեցած գործածությունը: Ինչպես՝ *առկայություն, առնչակցություն, արտացոլում, անցողականություն, գիտականություն, գործառություն, դիտողականություն, հակասականություն, կենսագործունեություն, հաջորդականություն, հարաբերակցություն, մոտավորություն, վերաբերություն* և այլն: Օրինակ՝ «Լեզուն **արտացոլում է** իրականությունը, որպիսով վերջինիս ներսում կատարվող տեղաշարժերը՝ քաղաքական, տնտեսական, մշակութային և այլն, ամբողջովին իրենց արտահայտությունն են գտնում լեզվում» [Համբարձումյան, 2019, 75]:

«Այդ տարբերության գիտակցումով որոշ մատենագիրներ ձգտում են «գեղջուկ բանից» խուսափել և հետևել հին լեզվական կանոններին, որովհետև դա համարվում է **«գիտականության»** չափանիշ» [Մկրտչյան, Խաչատրյան, 2016, 121]: «Հայերի և հայոց լեզվի ծագման մասին եղել են տարբեր տեսություններ, որոնք հաճախ հակասում են միմյանց» [Նույն տեղում, 18]:

Գիտական ոճի ընդհանրական բնույթի ձևավորման հարցում որոշ դեր են կատարում համապատասխան իմաստ ունեցող բառերն ու բառակապակցությունները, որոնք

ընդգծում են երևույթի ընդհանրականությունը կամ հատուկ հատկանիշները: Այդպիսիք են՝ *ընդհանրապես, ընդհանուր առմամբ, հիմնականում, որպես կանոն, ըստ էության, ի թիվս այլոց, սովորաբար, հաճախակի* և այլն: Այսպիսով, այդ արտահայտությունները նպաստում են գիտական տեքստում ընդհանուր միտք կամ դիտարկում ձևավորելուն՝ բարձրացնելով խոսքի ճշգրտությունը: Օրինակ՝ «Մակայն պարզվում է, որ բոլոր պետությունները չէ, որ քիչ թե շատ ճշգրիտ տվյալներ ունեն, իսկ որոշ դեպքերում էլ **ընդհանրապես** հնարավոր չէ ճիշտ պատասխան տալ» [Ջահուկյան, 1992, 7]:

«Եթե առաջինը հասկացվում է լեզվի բառային բոլոր միավորներին, ապա երկրորդի դեպքում՝ դրանց մի մասին, որովհետև բառերն **ընդհանուր առմամբ** անվանում են ոչ հավասար ընդգրկմամբ վերացարկված հասկացություններ, մանավանդ եթե նրանց հիմքը իրականությունն է՝ իբրև նյութական կողմ» [Համբարձումյան, 2019, 28]:

«Երկրորդ՝ Ուրուստրի, Ուրատրի, Ուրարտու անվանումները, ինչպես հաստատված է, ներկայացնում են Ա(յ)րարատ անվան ասորեստանյան (ասուրական) տարբերակները և **բուն առումով** նշանակում են «Արարատյան (երկիր)» [Մկրտչյան, Խաչատրյան, 2016, 131]: «Բառերի բնիմաստի և իմաստի միջև ժամանակի ընթացքում այս կամ այն չափով տեղի է ունենում փոփոխություն, որ **սովորաբար** կոչվում է իմաստային մթազնում» [Համբարձումյան, 2019, 131]:

«Որքան շատ է նրանց առանձնակի գոյության ժամանակը, **սովորաբար** այնքան մեծ են նրանց ունեցած տարբերությունները, և ընդհակառակն, որքան քիչ է այդ ժամանակը, **սովորաբար** այնքան մոտ են իրար այդ լեզուները» [Ջահուկյան, 1992, 8]:

Գիտական ոճի ընդհանրական բնույթը ձևավորվում է ոչ միայն բառապաշարային, այլև քերականական միջոցներով: Հատկապես կարևոր են այն միակազմ ընդհանրական նախադասությունները, որոնցում գործողությունը վերագրվում է ոչ թե կոնկրետ սուբյեկտին, այլ ընդհանրական կերպով ամբողջ կատեգորիային կամ երևույթին: Օրինակ՝ «Բառը իրականության վերաբերյալ առաջ եկած հասկացության անվանումն է» [Համբարձումյան, 2019, 111]:

«Լեզվաբանության մեջ ընդունված է ցեղակից լեզուների ամբողջությունը կոչել լեզվաընտանիք» [Ջահուկյան, 1992, 9]:

«Հունարենի հետևողությամբ կերտվել են նախածանցներ և նրանց միջոցով կազմվել բառեր» [Մկրտչյան, Խաչատրյան, 2016, 109]:

Գործողության ընդհանրական բնույթի արտահայտման ևս մեկ արդյունավետ միջոց է բայի կրավորական կառուցվածքը, որը թույլ է տալիս թուլացնել գործողության կատարողի նկատմամբ ուղղվածության աստիճանը և, հետևաբար, ընդգծել գործողության ընդհանրական բնույթը: Օրինակ՝ «Արդի հայագիտության մեջ հայերենի պատմության շրջանաբաժանման հարցը **համարվում է** լուծված. գիտական շրջանառության մեջ է դրված Գ. Ջահուկյանի կատարած շրջանաբաժանումը» [Նույն տեղում, 17]:

«Դժվար չէ նկատել, որ բաժանումը հիմնված է բառի հասկացական այն հատկանիշի վրա, որ ամբողջական իմաստ ունեցող բառերը սերտ առնչություն ունեն իրականության առարկաների, երևույթների վերաբերյալ հասկացությունների անվանման հետ, որպիսի

հատկությունից **զուրկ է համարվում** մյուս խոսքի մասերի մի որոշակի մասը» [Համբարձումյան, 2019, 126]: «Ստորոգումը **կատարվում է** քերականական արտահայտության միջոցներով, եղանակային և ժամանակային հարաբերության պայմաններում» [Նույն տեղում, 304]:

Բաղադրյալ ստորոգյալները ևս կարևոր միջոց են գործողության ընդհանրական բնույթի արտահայտման համար, ինչպիսիք են՝ «պետք է», «անհրաժեշտ է», «կարելի է», որոնք հաճախ զուգորդվում են գործողություն արտահայտող բայերի հետ, ինչպես՝ «վերլուծել», «կիրառել», «վերածել» և այլն: Օրինակ՝ «Ամենից առաջ **անհրաժեշտ է** տալ բառային իմաստի բնորոշումը» [Նույն տեղում, 125]:

«Դրանք պատկանում են հնդեվրոպական լեզվաընտանիքի տարբեր ճյուղերի կամ խմբերի, իրարից հեռացել են շատ հազարամյակներ առաջ, շատ ընդհանրություններ կարող են բացահայտվել միայն լեզվաբանական վերլուծությամբ, բայց այսուհանդերձ այսօր էլ **կարելի է** ցույց տալ այնպիսի նմանություններ, որոնք փոխառությամբ **չի կարելի** բացատրել, և որոնց համար **պետք է** ենթադրել հին ցեղակցական կապեր» [Ջահուկյան, 1992, 11]:

«Պատմական քերականության ուսումնասիրության մեթոդն ու քննության եղանակներն ինքնատիպ են, որ **պետք է** բացատրել նյութի քննության պատմական բնույթով» [Մկրտչյան, Խաչատրյան, 2016, 7]:

Գիտական ոճին բնորոշ են նաև ներդիր արտահայտությունները՝ բառեր, բառակապակցություններ կամ նախադասություններ, որոնք բանավոր խոսքում արտահայտվում են դադարի միջոցով, իսկ գրավոր խոսքում՝ համապատասխան կետադրությամբ: Դրանք բուն նախադասությունից կառուցվածքային առումով առանձնացված լինելով հանդերձ, կարևորվում են տեղեկատվական հազեցվածությամբ: Ներդիր արտահայտությունների միջոցով ներկայացվում են մեկնաբանություններ, բացատրություններ, լրացումներ, հղումներ, որոնք նպաստում են տեղեկության հստակեցմանն ու տեքստի ամբողջական ներկայացմանը: Օրինակ՝ «Ըստ նրա՝ այդ կարգը ներառում է (ավանդական տերմիններով) անձի և իրի (շնչավորի և անշունչի) առումները, այլն դիմորոշությունը և ստացականությունը (վերջինը կոչվում է ցուցաստացականություն)» [Համբարձումյան, 2019, 233]:

«Մնացած լեզուները բազմանդամ են, մասնավորապես շատ են և մեծ թվով խոսողներ ունեն հնդկական, իրանական, սլավոնական, իտալյան (այժմ ռոմանական), գերմանական լեզուները» [Ջահուկյան, 1992, 13]:

Ներդիր արտահայտությունները գիտական ոճի համար կարևոր գործառնություն են, քանի որ նպաստում են տեղեկատվության հստակեցմանը, մեկնաբանությանը կամ լրացմանը: Հատկապես հետազոտական աշխատանքներում դրանց հաճախականությունն աճում է՝ ընդգծելով գիտական ոճի տարբերությունը գեղարվեստական կամ առօրյա ոճերից: Գիտական տեքստերում նախադասությունների բաղադրիչների միջև տրամաբանական կապերն արտահայտելու համար կիրառվում են հատուկ բառաքերականական միջոցներ և կառուցվածքներ: Նշենք մի քանիսը՝ *Այն, որը (որոնք).... կոչվում է (են), Ելնելով (դրանից, այս ամենից, այս բոլորից), Այս ամենից (այս բոլորից, ասվածից) դժվար չէ (հեշտ է, կարելի է) եզրակացնել, որ*: Օրինակ՝ «**Տաբու է կոչվում այն եզրույթը, երբ լեզվում արտաքին հանգամանքների պատճառով արգելանք է դրվում բառերի,**

արտահայտությունների գործածության վրա, և դրանց փոխարեն նույն իմաստով գործածվում են ավելի ընդունելի համարվողները» [Համբարձումյան, 2019, 177]: «Հնչույթը սահմանել է Ն. Մ. Տրուբեցկոյը՝ **էլնելով** ամենից առաջ սոսյուրյան լեզու-խոսք հակադրությունից, այլև նրա ֆիզիկական-հոգեբանական երևույթ լինելուց» [Նույն տեղում, 93]:

Գիտական ոճին բնորոշ է խոսքի ընթացքի տրամաբանական կապակցվածությունը, որն ապահովվում է հատուկ կապող միավորների կիրառմամբ, օրինակ՝ *այսպիսով, ինչպես նշվեց, ըստ այդմ, ընդ որում, ի դեպ, արդ* և այլն: Այս լեզվամիջոցները նպաստում են տեքստի կառուցվածքային ամբողջականությանն ու մտածողության հստակ արտահայտմանը: Օրինակ՝ «**Ըստ որում, դրանցում հ'–ն նույնպես հանդես է գալիս միայն բառակցքում**» [Մկրտչյան, Խաչատրյան, 2016, 168]:

«**Ընդ որում, իբրև կանոն, նա լեզվի մի որակի մեջ դիտարկում է մեկ այլ՝ նոր որակին հատուկ լեզվական միավորների տարրեր**» [Նույն տեղում, 11]:

«**Արդ, ի՞նչ կովաններ կան հայերի՝ նախքան մ.թ.ա. 12–րդ դարը Առաջավոր Ասիայում...**» [Նույն տեղում, 27]:

«**Այսպիսով, կարելի է մտածել, թե բառապաշարի մասնագիտական, զբաղմունքային տարբերությունը ինչ–որ չափով կախված է լեզվի գործածության արտաքին հանգամանքներից**» [Համբարձումյան, 2019, 174]:

«**Այսպիսով, ցեղակից լեզուները միևնույն սկզբնական լեզվի պատմական ճյուղավորումներն են...**» [Ջահուկյան, 1992, 8]:

Ինչպես հայտնի է, գիտական խոսքին բնորոշ չէ երկխոսային կառուցվածքը. դրա փոխարեն հաճախ հանդիպում են ինքնահարցադրումներ, երբ հեղինակը ձևակերպում է խնդիրը կամ հարցադրումը և այնուհետև տալիս համապատասխան արձագանք՝ հանգելով որոշակի գիտական եզրահանգման: Օրինակ՝ «**Արդ, ի՞նչ կովաններ կան հայերի՝ նախքան մ.թ.ա. 12–րդ դարը Առաջավոր Ասիայում և, մասնավորապես, Հայկական բարձրավանդակում գտնվելու մասին**» [Մկրտչյան, Խաչատրյան, 2016, 27]:

«**Արդ՝ որո՞նք են հունաբան հայերենի նախադրյալները**» [Նույն տեղում, 110]: «**Որտե՞ղ է գործել հունաբան դպրոցը**» [Նույն տեղում, 111]: «**Ինչքա՞ն լեզու կա աշխարհում**» [Ջահուկյան, 1992, 7]: «**Ի՞նչ է նշանակում լեզվական ցեղակցություն**» [Նույն տեղում, 8]: «**Ի՞նչ լեզուներ են մտնում հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ**» [Նույն տեղում, 12]: «**Ե՞րբ է գոյություն ունեցել հնդեվրոպական նախալեզուն, և ե՞րբ է հայերենը դարձել ինքնուրույն լեզու**» [Նույն տեղում, 14]: «**Գրաբարը եղե՞լ է արդյոք խոսակցական լեզու: Ո՞ր բարբառը կամ բարբառային ո՞ր վիճակը պետք է լիներ գրաբարի հիմքը**» [Նույն տեղում, 77]:

Ուշադրության առնելով այս ամենը՝ նշենք՝ ինքնահարցադրումները գիտական խոսքի կառուցվածքում ոչ միայն ծառայում են որպես տրամաբանական կապող օղակներ, այլև հանդես են գալիս որպես նորարարական մեթոդ՝ գիտական միտքը համակարգելու և հարցադրումների միջոցով գնման նոր հորիզոններ բացելու համար: Այս կառուցվածքային առանձնահատկությունը թույլ է տալիս գիտական լեզվին պահպանել իր նպատակաուղղվածությունը, միաժամանակ արտահայտելով արդիականության նշաններ՝ փոխառնելով ժամանակակից հետազոտական մոտեցումներին բնորոշ հարցադրումային

տրամաբանությունը: Օրինակները ցույց են տալիս, թե ինչպես գիտնականը, ընթերցողի դարձնելով իր եզրահանգումների ճանապարհը, ներգրավում է ընթերցողին մտավոր գործընթացի մեջ՝ առանց դիմելու իրական երկխոսության:

Այսպիսով, ուսումնասիրության շրջանակում վերլուծության ենթարկվեցին գիտական բնագրեր՝ նպատակ ունենալով բացահայտել գիտական խոսքի կառուցվածքային առանձնահատկությունները: Այս ամենի հիման վրա կարելի է եզրակացնել՝ գիտական շարադրանքում գործածված էին պատմողական նախադասություններ, տերմիններ, սահմանումներ, եզրահանգումներ, դերբայական դարձվածներ, ինչպես նաև՝ որոշ դեպքերում՝ բառացի մեջբերումներ: Չնայած գիտական ոճին բնորոշ են տրամաբանական կառուցվածքն ու օբյեկտիվությունը, այնուամենայնիվ, գիտական բնագրերը ամբողջությամբ զուրկ չէին հուզաարտահայտչական տարրերից: Որպես արտահայտչական միջոց կիրառվել էր կրկնությունը՝ շեշտադրության նպատակով, ինչպես նաև՝ հարցական նախադասություններ: Նման տարրերի գործածությունը պայմանավորված է ոչ միայն թեմատիկ և ժանրային առանձնահատկություններով, այլև հեղինակի անհատական ոճով: Գիտական ոճի բնութագրական հատկանիշները ձևավորվում են գիտական հաղորդակցության անհրաժեշտությունից և գիտական մտածելակերպի առանձնահատկություններից, իսկ հայոց լեզվի արդի փուլը արտացոլում է գիտական ոճի այդ զարգացման ուղղությունը:

SUMMARY

The aim of the study is to analyze the structure of scientific discourse, attempting to reveal the vocabulary used in linguistic works, the ratio of parts of speech, sentence types, and their functions. This study seeks to uncover the characteristic features of scientific style and their role in the effectiveness of scientific communication. This study is based on the theoretical works of V. Hambardzumyan's "Principles of Linguistics", Ed. Mkrtchyan and L. Khachatryan's "Course on the History of the Armenian Language", and G. Jahukyan's "Conversations about the Armenian Language", which serve as the theoretical foundation and basis for conducting linguistic analyses.

An important aspect of this study is that the analysis of the structure of scientific discourse holds significant value in contemporary linguistics, as it contributes to improving the clarity and comprehensibility of scientific communication.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբրահամյան Ս., Գիտական ոճը և նրա առանձնահատկությունները // «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդես, Երևան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիա, 1982, թիվ 3, 14-26 էջ:
2. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, Հեղ. հրատ., 2014, 368 էջ:
3. Խաչատրյան Լ., Միրումյան Ս., Հայերենագիտական տերմինների ուսումնական բառարան, Երևան, «Գիտություն» հրատ., 2020, 440 էջ:

4. Համբարձումյան Վ., Լեզվաբանության հիմունքներ, Երևան, «Ասողիկ» հրատ., 2019, 367 էջ:
5. Մկրտչյան Էդ., Խաչատրյան Լ., Հայոց լեզվի պատմության դասընթաց, Երևան, «Ջանգակ» հրատ., 2016, 400 էջ:
6. Ջահուկյան Գ., Զրույցներ հայոց լեզվի մասին, Երևան, «Կանչ» հրատ., 1992, 119 էջ: